

ՀՀ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ
ԱՐԳԵԼՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Պողոսյան Վլ. (ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային
արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության
ծառայություն» ՊՈԱԿ, Հայաստան)

hushardzan@yahoo.com

Բանալի բառեր` արգելոց-թանգարան, պատմամշակութային
ծառանգություն, ռազմավարություն, պատմական միջավայր:

Գաղնիք չէ, որ պատմական հիշողության փոխանցման և
վերակենդանացման աղբյուրը մեզ հասած մշակութային
ծառանգությունն է, որի արդյունավետ պահպանման և մեկնաբանման
դեպքում է արժևորվում մեր ներկան և ապագան: Այս առումով
պատմամշակութային արգելոց-թանգարանները և արգելոցները
դիտարկվում են որպես մշակութային անշարժ և շարժական,
նյութական և ոչ նյութական ծառանգության համալիր պահպանման և
կառավարման արդյունավետ մշակութային կազմակերպություններ:

Սույնով քննության առարկա են ՀՀ տարածքում գործող արգելոց-
թանգարանների և պատմամշակութային արգելոցների գործնական
ոլորտի զարգացման հեռանկարները: Մասնավորապես
առանձնացվում են հետևյալ իրողությունները.

- Հետխորհրդային իրականության մեջ արգելոց-թանգարանների և
արգելոցների քանակը կրճատվեց, և դրանց մի մասը միայն
շարունակեցին գործել որպես անշարժ հուշարձանների, դրանց
հարակից միջավայրի պահպանման և կրթամշակութային,
գիտական նպատակներով օգտագործվող պետական կամ

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով:

- Թեև գործող արգելոց-թանգարաններն ու արգելոցները համարվում են սիրված կրթամշակութային, զբոսաշրջային հաստատություններ, և որոշները նույնիսկ այցելությունների մակարդակով գերազանցում են մյուս տիպի թանգարաններին, այնուամենայնիվ, դրանց հսկայական բովանդակային և սոցիալ-տնտեսական զարգացման ներուժը մնում է չօգտագործված:
- Արգելոց-թանգարանները և արգելոցները, որպես յուրօրինակ մշակութային կազմակերպություններ, իրավօրենսդրական դաշտում և համապատասխան գիտական հետազոտություններում համակողմանի ուսումնասիրված և մեկնաբանված չեն:
- Արդի արգելոց-թանգարանները և արգելոցները, որպես մշակութային ժառանգության պահպանման և կառավարման եղանակներ, կիրառելի չեն երկրի բոլոր մարզերի կտրվածքով, իսկ գործողներն էլ չեն ապահովում երկրի ողջ մշակութային բազմազանությունը:

Վերոնշյալ իրողությունները հիմք են տալիս ձևակերպել հետևյալ ռազմավարական զարգացման ուղղությունները.

1. Արդի սոցիալ-մշակութային իրողություններին համընթաց՝ արգելոց-թանգարանների և արգելոցների գործունեության վերաիմաստավորումը՝ որպես ժառանգության համակողմանի արժևորման և սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր ռեսուրսներ: Նմանատիպ մոտեցման ձևավորումը նախատեսվում է կիրառել՝ ելնելով «Մշակութային լանդշաֆտի» հայեցակարգային սկզբունքներից:
2. Մարզերում արգելոց-թանգարանների և արգելոցների նշանակության ու գործունեության արժևորման և համայնքային

զարգացման ծրագրերում դրանց ներուժի օգտագործման մեխանիզմների ներդրումը:

3. Փոխկապակցված և բազմաբնույթ արգելոց-թանգարանների և արգելոցների ցանցի ստեղծումը և գործող համակարգի զարգացումը:
4. Հարկային, ներդրումային, արտաբյուջետային եկամտի տարաբնույթ աղբյուրների ձեռքբերման նոր մեխանիզմների կիրառումը:
5. Նպատակային ծրագրերի և հետազոտությունների հիման վրա արգելոց-թանգարանների հոգևոր և նյութական զարգացման ողջ ներուժի բացահայտումը և կիրառումը:

THE CONCEPTUAL SETTINGS FOR DEVELOPMENT SYSTEM OF THE HISTORICAL-
CULTURAL MUSEUM-RESERVES AND RESERVATIONS IN THE REPUBLIC OF
ARMENIA

Poghosyan V. (Ministry of Culture of the Republic of Armenia, “Service for the Protection of
Historical Environment and Cultural Museum-Reservations” Non-Commercial State
Organization, Armenia)